
ԴԱՎԹԻ ՄԱՂՄՈՍՆԵՐԻ ԱՇԽԱՐՀԱԲԱՐ ԱՌԱՋԻՆ ՏՊԱԳԻՐ ՄԵԿՆՈՒԹՅԱՆ ԼԵԶՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ԹԱՄԱՐԱ ՊՈՂՈՍՅԱՆ

Աշխարհաբարի վաղ շրջանը հայերենագիտության մեջ ընդունված է անվանել *վաղ աշխարհաբարի ենթաշրջան*, որը բնութագրելիս Գ. Ջահուկյանը նշում է. «Ի տարբերություն նախորդ ենթաշրջանի¹ այս ենթաշրջանում կան որոշակի միասնականացնող տենդենցներ, որոնք էլ հենց հիմք են տալիս ընդհանուր լեզվի կազմավորման և նրա կողմից գրաբարի՝ որպես գրական լեզվի, ֆունկցիաները սահմանափակելու համար»²: Այս ժամանակաշրջանում են տպագրվել աշխարհաբար առաջին գրքերը, որոնցից մեկի՝ «Պարզաբանութիւն հոգեւնուագ սաղմոսացն Դաւթի մարգարէին» երկի լեզվական քննությանն է նվիրված մեր աշխատանքը:

XVII դարի կեսերին հայ ժողովուրդը սաղմոսների հանդեպ առանձնահատուկ մեծ հետաքրքրություն էր ցուցաբերում, որը, ըստ Հ. Միրզոյանի, հայերի գիտակցության մեջ կատարվող ազատագրական խմորումների հետևանք էր: Սաղմոսները հնարավորություն էին տալիս արտահայտելու կյանքի հանդեպ մարդկանց դժգոհությունը, հուսահատությունը, նաև հավատը, երազանքները³:

«Պարզաբանութիւն հոգեւնուագ սաղմոսացն Դաւթի մարգարէին» գիրքը լույս է տեսել 1687 թ. Վենետիկում՝ Նահապետ Ագուլեցու տպարանում: Խոջա Նահապետը ցանկացել է օգտակար լինել «հանուրց հայկազունեաց վաճառականաց»՝ մատուցելով մի գիրք, որտեղ ներկայացված կլինեն գրաբար սաղմոսների աշխարհաբար պարզաբանությունները: Գրքում տեղադրված բանաստեղծության մեջ մեկնաբանվում է Ագուլեցու քայլը.

....Ի փառս փրկչին մեր Յիսուսի. // և ի յօգուտ հայոց ազգի. // Ի յիշատակ անքակտելի. // և ի սփոփանս ընթերցողի...⁴

¹ Նախորդ ենթաշրջան ասելով՝ Գ. Ջահուկյանը նկատի ունի միջին հայերենի աշխարհաբարացման ենթաշրջանը՝ 15-16-րդ դդ.:

² Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը (համառոտ ուրվագիծ), Եր., 1969, էջ 50:

³ Հ. Միրզոյանը նշում է, որ 1638-1682 թթ. Սաղմոսը լույս է տեսել ավելի քան տասն անգամ (տե՛ս Ա. Ղ. Միրզոյան, XVII դարի հայ փիլիսոփայական մտքի քննական վերլուծություն, Եր., 1983, էջ 122):

⁴ «Պարզաբանութիւն հոգեւնուագ սաղմոսացն Դաւթի մարգարէին», Վենետիկ, 1687, էջ 838: Հետայսու բոլոր օրինակները և մեջբերումները բնագրային ուղղագրությամբ տրվելու

Գ. Ջահուկյանը Հովհաննես Հակոբ կաթողիկ քահանային, ով հայտնի է Հոլով մականվամբ, համարում է 17-րդ դարի ամենաբեղմնավոր հայ մատենագիրներից մեկը, իսկ «Պարզաբանութիւն հոգեւուագ սաղմոսացն Դաւթի մարգարէին» երկի աշխարհաբարը՝ ընդհանուր հասկանալի լեզվի մի տարբերակ⁵:

Հ. Միրզոյանը գրում է, որ XVII դարի հայ թարգմանական գրականության ստեղծման գործում հայ մշակույթի երախտավոր, քերական, ճարտասան և հասարակական գործիչ Հովհաննես Հոլով Կոստանդնուպոլսեցին բացառիկ վաստակ ունի: Մեր մշակույթի պատմության տեսանկյունից Հ. Միրզոյանը Հոլովի թարգմանական ժառանգության մեջ հատկապես արժեքավոր է համարում Ճուան Պապիստա Պոռթալի «Գիրք բնագնութեան»՝ Ֆրանչիսկո Սթելուրթոյի համառոտած տարբերակը և աշխարհաբար երկրորդ տպագիր գիրքը՝ «Պարզաբանութիւն հոգեւուագ սաղմոսացն Դաւթի մարգարէին», որը ոչ միայն թարգմանություն է, այլև պարունակում է Հոլովի սեփական մեկնությունները, որոնցով գիրքը մեծ կարևորություն է ձեռք բերել իր ժամանակի համար⁶:

Հովհաննես Հոլովի՝ իբրև թարգմանչի և կազմողի կատարած աշխատանքի մասին տեղեկանում ենք Նահապետ Ագուլեցու անունից գրված և երկի վերջում զետեղված բանաստեղծությունից, որից պատկերացում ենք կազմում գրքի ստեղծման հարցում նրա ունեցած մեծ դերի մասին.

*....ի չորս լեզուացս թարգմանեալ, // Յունաց հրէից համաձայնեալ,
// և լաթինաց ըն շարագրեալ, // Հայոց լեզուաւ տպագրեալ, // Աշխարհաբար զայս ծանուցեալ // Ըզ յիշատակ բարի թողեալ... (էջ 838):*

Հովհաննես Հոլովի գործունեության գնահատությանն անդրադառնալիս Հ. Միրզոյանը նշում է, որ նա մեծապես ազդել է XVII-XVIII դդ. հայ տեսական մտքի վրա, այդ ազդեցությունը եղել է բարդ և հակասական: Ժամանակն է, որ նա նույնպես դասվի հայ մշակույթի մեծ երախտավորների շարքը, իր արժանի տեղը գրավի մեր մշակույթի պատմության համապատասխան ուսումնասիրություններում⁷:

Հոլովը գրքի «*Մըատ առ ընթերցողս*» մասում բացատրել է, թե ինչու է ցանկացել սաղմոսների պարզաբանությունը ներկայացնել աշխարհա-

են այս աղբյուրից՝ շարադրանքում՝ փակագծերի մեջ նշելով էջը: Աշխատանքի ընթացքում գրքի անվանումը կներկայացվի նաև համառոտ տարբերակով՝ «Պարզաբանութիւն»:

⁵ Տե՛ս Գ. Բ. Ջահուկյան, Գրաբարի քերականության պատմություն (XVII-XIX դդ.), Եր., 1974, էջ 88:

⁶ Տե՛ս Հ. Ղ. Միրզոյան, նշվ. աշխ., էջ 116-123:

⁷ Տե՛ս Հ. Ղ. Միրզոյան, Հովհաննես Հոլովի գործունեության գնահատության հարցի շուրջը, «Միջազգային հայերենագիտական գիտաժողովի զեկուցումներ», Եր., 1984, էջ 402-408:

բար. «Բայց նախ գիտելի է՝ զի գմեկնութիւնս զայս այնու դիտաւորութեամբ շարադրեցաք մեք աշխարհօրէն, զի **կարիցեն աշխարհականք ամենեքեան դիրապէս իմանալ զայն** (ընդգծումը մերն է - Թ. Պ.). քանզի եկեղեցականք ունելով զբաւական կրթութիւն և զուսումն, յարածամ ճաշակէն զքաղցրութիւնս սրբազանից գրոց. իսկ աշխարհականք որք պարապին ի զբաղմունս և ի հոգս աշխարհի, ամեննին մնան անմխիթարք ի յայսպիսեաց շնորհաց» (էջ 8): Նա միաժամանակ հավելում է, որ իրեն չարհամարհեն որպէս հայոց լեզվին անհմուտ մեկի, քանի որ. «...ոչ վասն եկեղեցականաց, այլ վասն օգտի և շահաւէտութեան հասարակաց ժողովրդոց եղև առաջիկայ մերս գործառնութիւն» (էջ 8): Հ. - Միրզոյանը մեկնաբանում է, որ այս դեպքում ժողովրդի և հոգևորականության շահերը հակասում էին իրար, և աշխարհաբարով գրելը նպաստում էր ժողովրդի կրթության և լուսավորության գործին⁸:

Թեև 1674 թ. Հռոմում լույս տեսած «Զտութիւն հայկաբանութեան կամ քերականութիւն հայկական» գրքում Հոլովն աշխարհաբարի մասին գրում էր. «Երկրորդն որ է շփոթուն և անկանոն, որով և վարին արք անտեղեակք գրոց, կոչի աշխարհական»⁹ (նա առանձնացնում էր հայոց լեզվի երեք տեսակ՝ հայկական, աշխարհական, քաղաքական), սակայն տարիներ անց նա «Պարզաբանութիւն»-ը թարգմանում և մեկնում է աշխարհաբար: Ինչպէս նշում է Հ. Միրզոյանը, Նահապետ Ագուլեցին իր ոսկու քսակով, իսկ Հոլովն իր ոսկյա գրչով միննույն նպատակն էին հետապնդում¹⁰.

Տարակուսանք բանն բարձեալ, // և յիմարաց աչքն բացեալ, // Դաւթի սաղմոսըն թարգմանեալ, // Մարզաբականք հետ ընթացեալ... (էջ 838):

Երկը չի վրիպել Հ. Աճառյանի ուշադրությունից, որի մասին մեծանուն լեզվաբանը գրում է. «840 երեսանոց ընդարձակ մի գիրք է, որի լեզուն խառնուրդ է գրաբարի, արևմտյան աշխարհաբարի և արևելյան աշխարհաբարի»¹¹:

Այս ժամանակաշրջանում հետադարձ շարժումը դեպի գրաբարը հայոց լեզվի պատմության մեջ կարևոր իրողություն դարձավ, որի մասին Ա. Այտընյանը նշում է. «Այս լեզուի նորոգութիւնը, որ աշխարհաբարին մինչեւ հիմայ առած աղաւաղութեանցը դիմաց իսկական Յետաշրջութիւն (reaction) մըն է, միանգամայն նոր լեզուին համար Առատութեան անսպառ աղբիւր մը կրնայ ըսուիլ...»¹²: Այսպիսով, Ա. Այ-

⁸ Տե՛ս Հ. Ղ. Միրզոյան, XVII դարի հայ փիլիսոփայական մտքի քննական վերլուծություն, էջ 72:

⁹ Հ. Հոլով, Զտութիւն հայկաբանութեան կամ քերականութիւն հայկական, Հռոմ, 1674, էջ 3:

¹⁰ Տե՛ս Հ. Ղ. Միրզոյան, XVII դարի հայ փիլիսոփայական մտքի քննական վերլուծություն, էջ 124:

¹¹ Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, II մաս, Եր., 2013, էջ 449-450:

¹² Ա. Այտընյան, Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն

տընյանը մեր լեզվի զարգացման մեջ այս իրողությունն անվանում է «յետաշրջոթին», Ն. Աճառյանը՝ «գեղեցիկ նորամուծություն»¹³ և փորձում պարզել ով է եղել դրա հեղինակը: Նա սխալ է համարում այն ընդունված կարծիքը, թե առաջին անգամ լեզվի մաքրությանն ուշադրություն է դարձրել «Շտեմարան»-ը՝ Զմյուռնիայի առաջին հայ թերթը (ի դեպ, սա ամերիկյան բողոքական միսիոներների հրատարակությունն էր և կոչվում էր «Շտեմարան պիտանի գիտելեաց», առաջին համարը լույս է տեսել 1839 թ. հունվարի 1-ին)¹⁴, և նշում. «Շտեմարանից շատ առաջ, 1687 թվին Վենետիկ տպված Պարզաբանությունը արդեն շատ մաքուր լեզու ուներ. թուրքերեն բառերի թիվը խիստ քիչ էր նրա մեջ և հայերեն բառերն էլ բարբառային ձևով չէին, այլ գրաբար...»¹⁵: Ռ. Իշխանյանը, անդրադառնալով այն հարցին, որ Հոլովը գերապատվություն է տվել գրաբարյան ձևերին, նշում է, որ սա գրական նոր լեզվի զարգացման ուղին է, որը հետագայում պիտի պաշտպանեին «Հյուսիսսափայլ»-ը, ավելի ուշ՝ Վ. Տերյանը, և այն պիտի հաղթեր¹⁶: Հոլովը փորձում էր գրաբարի բառապաշարն օգտագործել և այդ կերպ վաղ աշխարհաբարն ազատել բարբառային փոխառություններից: Թեև «Պարզաբանություն» լեզվում դրանք առկա են, սակայն նա նախապատվությունը տվել է գրաբարյան բառերին՝ աշխարհաբարյան բառաձևերի գուգաձևությունները մեղմելով: Լ. Եզեկյանը կարծիք է հայտնում, որ վերոհիշյալ երկում գրաբարյան տարրերի առկայությունը պայմանավորված է գրքի բովանդակությամբ, նաև գործառնությամբ՝ գրաբար սաղմոսների աշխարհաբար փոխադրությամբ. «Բացի դրանից, «Պարզաբանության» թարգմանիչ Հովհաննես Հոլովը, որը ժամանակի գիտության և մշակույթի նշանավոր գործիչներից էր, երկը թարգմանելիս աշխատել է հնարավորին չափ նոր հայերենը սկզբունքորեն հարստացնել գրաբարյան բառերով ու քերականական ձևերով»¹⁷:

Գրքի էջերը (բացառությամբ մի քանիսի) երկու մասից են բաղկացած. առաջին հատվածում ներկայացվում են գրաբար սաղմոսները, երկրորդում տվյալ գրաբար հատվածի դիմաց նրա աշխարհաբար մեկնությունն է կամ պարզաբանությունը: Ռ. Իշխանյանը նշում է, որ սաղմոսների թարգմանությունները հավանաբար հիմնականում կատարվել են լատիներենից, հունարենից, իտալերենից¹⁸: Պարզաբանություն-

լեզվի, Եր., 1987, էջ 237-238:

¹³ Ն. Աճառյան, նշվ. աշխ., էջ 476:

¹⁴ Տե՛ս <http://tert.nla.am/archive/NLA%20AMSAGIR/Shtemaran%20PitaniGit/1.pdf> [Մասնաչեղի էր 09. 01. 2016]:

¹⁵ Ն. Աճառյան, նշվ. աշխ., էջ 476:

¹⁶ Տե՛ս Ռ. Իշխանյան, Նոր գրական հայերենը XVII-XVIII դարերում, Եր., 1979, էջ 99:

¹⁷ Լ. Կ. Եզեկյան, Գրական աշխարհաբարը և արևելահայ պատմավեպի լեզուն, Եր., 1990, էջ 34:

¹⁸ Տե՛ս Ռ. Իշխանյան, նշվ. աշխ., էջ 75:

ները հաճախ սկսվում են *այսինքն* բառով, ինչպես՝ սաղմոս՝ «*Բանից իմոց ունկն դիր տեր և իմիտ առ գաղաղակ իմ*», պարզաբանություն՝ «*Այսինքն, տեր Աստուած, կաղաչեմ զքեզ սրտի մտօք, իմ բանիս իմ խօսքիս և իմ գանկատիս ականջ դիր և իմ գիշեր և ցերեկ արարած աղաղակն միտք արա՛, և ինձ ի թիկունս հասիր*» (Էջ 26):

Ստորև կներկայացնենք «Պարզաբանութիւն հոգեւնուագ սաղմոսացն Դաւթի մարգարէին» գրքի լեզվական որոշ առանձնահատկություններ, որոնցով կարելի է պատկերացում կազմել այս վաղաշխարհաբարյան նմուշի, դրա միջոցով՝ հայերենի զարգացման տվյալ փուլի լեզվալիճակի մասին առհասարակ: Հարկ ենք համարում նշել, որ Ռ. Իշխանյանը «Պարզաբանութիւն» երկի լեզուն բնութագրել է՝ ընտրելով մի շարք կարևորագույն բաղադրիչներ, միաժամանակ գրելով. ««Պարզաբանութեան» լեզուն արժանի է ավելի մանրակրկիտ քննության, վերը մեր տվածը մի ակնարկային փորձ է սուսկ»¹⁹: Ուսումնասիրության՝ լեզվական իրողությունների «ընտրովի» եղանակը Լ. Եզեկյանը միանգամայն ընդունելի է համարում՝ կարծելով, որ այն ավելի կոնկրետ ու հավաստի տվյալներ է տալիս որևէ երկի լեզվական համակարգի քննության ժամանակ²⁰:

Մենք նույնպես առաջնորդվում ենք քննության այս եղանակով. երկի լեզվական առանձնահատկություններից աշխատանքում կներկայացնենք, մեր կարծիքով, առավել բնութագրականները և, մանավանդ, թվաքանակով առավել տարածվածները: Դրանք, ի թիվս այլ առանձնահատկությունների, նաև մատնացույց են անում արևելահայ և արևմտահայ լեզվամիջոցների միահյուսված առկայությունը երկի լեզվում:

Բառօգտագործում: 1. **Մին** և **մէկ** զուգահեռ ձևերից գրքի լեզվում գործածվում է երկրորդը, օրինակ՝ *....որ լինի թէ մէկ հնարք մի գործեն ընդ[դ]էմ իւրեանց ստեղծողին....* (16-17), *....թէն մէկ ժամանակ մի զիս պատերէին....* (22), *....երբ որ մէկ բանի մի համար երդում կանէ, իւր խօսքն հաստատ կու պահէ....* (59) ևն: **Մէկ**-ը 17-18-րդ դարերում ընկալվել է որպես գրաբարյան ձև, **մին**-ի համեմատությամբ եղել և այսօր էլ ընդունվում ու գործածվում է որպես գրական ձև: Մի քանի անգամ հանդիպում է **մին**-ը, որի կիրառությունը շատ նվազ է **մէկ**-ի համեմատությամբ, օրինակ՝ *Իբր վասն գաղտնի գիտութեանց որդւոյն Աստուծոյ, որոց մինն է՝ գիտութիւն վախճանի աշխարհիս....*(40) ևն: **Մին**-ը **մի**-ի և **ն** հոդի միավորումից է առաջացել, այն բնորոշ է արևելյան որոշ բարբառների՝ Արարատյան, Արցախի, Ն. Ջուղայի, իսկ արևմտյան բարբառներին հատուկ է **մըն**-ը, որը **մին**-ի հնչյունափոխված տարբերակն է, գրքում դարձյալ չի հանդիպում: **Մի** ձևը երկի լեզվում գործած-

¹⁹ Ռ. Իշխանյան, նշվ. աշխ., էջ 100:

²⁰ Տե՛ս Լ. Կ. Եզեկյան, նշվ. աշխ., էջ 32-33:

վում է անորոշի նշանակությունն արտահայտելու համար, իսկ արևմտահայ մը տարբերակը բացակայում է:

2. Գործածվում են ցուցական դերանունների գրաբարյան **այս, այդ, այն** և դրանցից կազմված ձևերը, նաև **սա, դա, նա**-ի գրաբարյան ձևերը, օրինակ՝ *Այս սաղմոսումս կուխօսի մարգարէն բարեպաշտ մարդկանց համար....* (11), *Այսինքն, այսպէս չեն անօրեն մարդիք, այսպէս չեն այլ փոշու նման են* (14), *....մի այնչափ սրտմտիք և զայրանայք* (24), *....այնորիկ որք կուիջանեն ի դժոխս* (610), *սովալ* (4), *այնորիկ* (9), *նոցա* (12), *նորանէ* (12), *սոքա* (15), *այնոր համար* (18), *դորա* (21), *նոքա* (29), *այնորիկ* (160), *այնոցիկ* (160), *նոցանում* (515, այս օրինակում տեսնում ենք գրաբարյան **նոցա**-ն և ներգոյականի ոչ գրաբարյան **ում**-ը), *նորին* (840) են: Նշված ձևերը երկի լեզուն մոտեցնում են գրաբարին: Դերանունների **էս, էդ, էն, սս, ադ, ան** և դրանցից կազմված ձևերը չեն հանդիպում, մի քանի տեղ կիրառվել են **այսոր, այնոր**, օրինակ՝ *....այնոր համար ասաց. թէ ես այսօր զքեզ ծնայ* (18), *Այսինքն, այսոր համար իմ սիրտս ուրախացաւ, և իմ լեզուս ցնծաց....*(62-63) ևն, որոնք Ռ. Իշխանյանը համարում է արևմտահայ **ասոր, անոր** բառերի բանավոր գործածության ազդեցություն²¹: Ըստ մեզ՝ դրանք կարող են լինել նաև գրաբարյան **այսորիկ, այնորիկ**-ի ազդեցության արդյունք: Հարկ է նշել, որ կիրառվում են նաև անձնական դերանունների գրաբարյան ձևերը, ինչպես՝ *իմոյ* (3), *ինքեան* (5), *մերոյ* (12), *իւրոյ* (13), *զիւրեանք* (17), *զիւրեանց* (20), *քեզանէ* (21), *մեք* (610) ևն:

3. Գրքի լեզվում գործածվում է գրաբարյան **այլ** բառաձևը, օրինակ՝ *....և չկայ մինչև իմէկ մարդ մի այլ....* (56), *....որ մինչև գիշերն այլ իմ երիկամունքն որ արհուրեան գործիք են* (62) ևն: **Այլ**-ի ժողովրդաբարբառային **էլ** և **ալ** հոմանիշները չեն կիրառվում:

4. **Լինել** և **ըլլալ** ձևերից հանդիպում է միայն **լինել**-ը, օրինակ՝ *.... գէրէ այն ժամանակն արժանի կուլինին փառաց և պսակաց* (20), *.... կուադաչէ մարգարեն զաստուած որ իւրն օգնական լինի* (130), *.... և վերստին արժանի լինիք շնորհաց և բարեկամութեան նորին* (485) ևն:

5. Բառապաշարում հաճախ են հանդիպում ժողովրդաբարբառային բառեր, որոնց մեջ կան նաև փոխառյալներ: Բերենք ժողովրդաբարբառային բառերի մի քանի նմուշ՝ տալով որոշ մեկնաբանություններ.

❖ *զերէ* (13, 15 ևն (շատ է գործածվում))՝զերէ (պրսկ. zira)-որովհետև²²,

❖ *թալաք* (166)՝ թալակ (պրսկ. talak)- թակարդ²³,

²¹ Տե՛ս Ռ. Իշխանյան, նշվ. աշխ., էջ 77:

²² Տե՛ս Ռ. Մ. Ղազարյան, Հ. Մ. Ավետիսյան, Միջին հայերենի բառարան, Եր., 2009, էջ 205:

²³ Տե՛ս նույն տեղը, էջ 230:

❖ *գորայ* (475) // *գորա* (170)՝ գորա-համեմատ, համապատասխան²⁴,

❖ *տնազատեղ* (478) - (ժղ.): 1. Տնազի տեղիք տվող, տնազի առարկա: 2. Տնազի առիթ²⁵,

❖ *իքմիհեն* (494)՝ *իքմին* - (գվռ.): 1. Ոք, ոմն: 2. Որևէ բան²⁶,

❖ *պողազէն* (609)՝ պողազ-բողազ՝ բուկ - 1. (կզմիս.): Բերանի խոռոչն ընկանի հետ միացնող անցքը: 2. (ժղ.): Կերակրափողի վերին մասը, ընկան²⁷ նն:

Բառապաշարում յուրօրինակ տեղ ունեն նաև ժողովրդախոսակցական հարադրությունները, որոնք համեմուտ են խոսքը և մոտեցնում ժողովրդականին, օրինակ՝ *երկունք կրեց* (35), *միտք կրեց* (35), *ոտաց տակն ձգեցիր* (38-39), *փառօք պսակեցիր* (38), *ոխս և վրեժս...առիք* (41), *իմահ մատնեցին* (70), *կուլ տվեց* (89), *վիճակ ձգեցին* (111), *քամակն կառնու* (493) նն:

6. **Վերայ** կապը (հետադրությունը) հանդիպում է միայն տվյալ գրաբարյան ձևով, օրինակ՝ *աշխարհիս վերայ* (17), *Սիրոնի լեռան վերայ* (18), *իվերայ խաչին* (21), *ժողովրդեանդ վերայ է* (22), *փրկութեանն վերայ* (166), *իվերայ երկրի և աշխարհիս* (502) նն: **Վերայ** գրաբարյան ձևը կիրառվել է նոր գրական հայերենում մինչև 20-րդ դարը: Դրա ռամկոթեն տարբերակն է **վրայ**, **վրան**, որից բխող **վրայ** ձևը երկի լեզվում չի գործածվում:

Այսպիսով, բառօգտագործման վերաբերյալ մեր ընտրած լեզվական հատկանիշների քննությունը ցույց է տալիս, որ երկի լեզվին բնորոշ բառաձևերը (1. մին, 2. այս, այդ, այն, սա, դա, նա, 3. այլ, 4. լինել) գործածված են առանց վաղաշխարհաբարյան մյուս երկերին հատուկ զուգաձևությունների, բառապաշարին բնորոշ են բարբառային, ժողովրդախոսակցական բառեր (այդ թվում նաև փոխառյալ), հարադրություններ, որոնք մեծ դեր ունեն գրքի բառապաշարը ժողովրդականին մոտեցնելու հարցում:

Հոլովման համակարգ: Հոլովման համակարգի ուսումնասիրությունը սկսենք հոգնակի ուղղականի կազմությունից, որից կարող ենք բխեցնել հոգնակի թվի կազմության ընդհանուր սկզբունքը այս վաղաշխարհաբարյան գրքի լեզվում:

1. Հոգնակի ուղղականը կազմվում է գրաբարյան **ք** և աշխարհաբարյան **եր** և **ներ** հոգնակերտներով, օրինակ՝ *օրէնքն և պատուիրանքն* (12, 17), *ագգերն* (18), *ատամներն* (22), *ջրերն* (152), *երևելիք և աներ-*

²⁴ Տե՛ս «Հայոց լեզվի բարբառային բառարան», հ. 1, Եր., 2001, էջ 271:

²⁵ Տե՛ս Է. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, հ. 2, Եր., 1976, էջ 1449:

²⁶ Տե՛ս Է. Աղայան, նշվ. աշխ., հ. 1, էջ 510, **Հ. Աճառեան**, Հայերեն գաւառական բառարան, Թիֆլիս, 1913, էջ 404:

²⁷ Տե՛ս Է. Աղայան, նշվ. աշխ., հ. 1, էջ 208:

ևոյթ (154), *աչքեր* (608), *ազգք* (801) ևն: Մակայն կարելի է ասել, որ գերակշռում են գրաբարյան **ք**-ով ձևերը: Հոգնակիի վերաբերյալ նշենք որոշ առանձնահատկություններ, ինչպես՝

❖ միևնույն բառի հոգնակին կազմվում է տարբեր ձևերով՝ *գրգեր* (25) // *գիրգք* (8), *հիմքերն* (76) // *հիմունք* (76), *հրեշտակներն* (165) // *հրեշտակք* (166) ևն,

❖ հանդիպում են նախադասություններ, որոնցում միաժամանակ առկա են **ք, եր, ներ** հոգնակերտներով ձևեր, օրինակ՝ *....իբր թալաքներն և հնարագործութիւնքն որ իմ թշնամիքն ինձ համար պատրաստեղէին, ինձ ժամանեցին....* (70), *....կռապաշտից թագաւորացն վերայ.... և լեռների հիմքերն շարժեցան, սասանեցան....* (71) ևն:

❖ կան բառեր, որոնք ունեն գրաբարյան հոգնակիի ձև և ստացել են աշխարհաբարյան հոգնակերտ, ինչպես՝ *հիմքերն* (71), *ձիանքներով* (92), *խոսքերով* (169), *աչքեր* (608), *ձեռքեր* (608), *ոտքեր* (609) ևն,

❖ *մարդ* բառի հոգնակին հանդիպում է հետևյալ ձևով՝ *մարդիք* (21, 27) ևն, այն գրքի տարբեր մասերում գործածվում է նաև հոդերով, ինչպես շատ այլ գոյականներ՝ *մարդիքս* (14) ևն // *մարդիքդ* (17) ևն // *մարդիքն* (20) ևն,

❖ հանդիպում են նաև գրաբարյան հոգնակիի այլ կազմություններ, ինչպես՝ *կանայքն* (505), *ազիւնքն* (505), *անձինք* (832), *զուարթունք* (831) ևն:

2. Հոլովման համակարգում կարելի է առանձնացնել երկու շերտ.

ա) զուտ գրաբարյան թեք հոլովաձևեր, որոնք բնորոշ չեն բարբառներին և վաղ աշխարհաբարին,

բ) թեք հոլովաձևեր, որոնք բնորոշ են եղել գրաբարին, սակայն հետագայում փոխանցվել են նաև միջին հայերենին, բարբառներին, վաղ աշխարհաբարին: Զուտ գրաբարյան թեք հոլովաձևերը գործածության մեծ հաճախականություն ունեն, օրինակ՝ *մարդոյն* (11), *փարիսեցոց* (12), *սրբոց նախահարց և մարգարէից* (19), *երկիւղիւ* (19), *ի գերեզմանին* (22), *ի բերանոյ* (23), *յաւուրս* (168), *սհիւ և սաղմոսիւ* (604), *յաշխարհի* (804) ևն:

Սեռական-տրական հոլովի վերաբերյալ հարկ է նշել հատուկ անունների հոլովումը, որը գրաբարյան է, ինչպես՝ *Յովսեփայ* (3), *Ղուկասու* (13), *Յոհաննու* (13), *Յակոբայ* (505), *Երուսաղեմայ* (512) ևն:

Հոգնակի սեռականի կազմության հիմնական սկզբունքը ևս գրաբարյան է: Առկա են գոյականներ, որոնց հոգնակի սեռականը **ի** թեքությամբ է կազմվում, որը բնորոշ է արևելահայերենին, օրինակ՝ *կռապաշտների* (152), *ջրերի* (502), *խոյերի* (607), *ոչխարների* (607) ևն: Արևմտահայերենին հատուկ **ու** հոլովիչով կազմություններ չեն հանդիպում: Մակայն ստորև բերվող օրինակում **ներ** հոգնակերտով գոյականը հոլովվել է գրաբարյան **ոյ** թեքությամբ, որի հիման վրա պիտի ձևավորվեր

արևմտահայերենին հատուկ **ու** հոլովիչը, ինչպես՝ *եկեղեցներոյ* (169):

Անորոշ դերբայի սեռական-տրական հոլովածները կազմվում են **ոյ** թեքությո՞վ, որը դարձյալ գրաբարյան կազմություն է, ինչպես՝ *յարկացուցանելոյ* (9), *գործելոյ* (15), *օրհնելոյ* (492), *անկելոյ* (800) ևն: Անորոշ դերբայի աշխարհաբարյան **ու** հոլովիչով կազմված սեռական-տրականի ձևեր գրքի լեզվում չեն գործածվում:

Սեռական-տրական հոլովի վերաբերյալ հարկ է նշել մի հետաքրքիր իրողություն. կապական կառույցները հանդիպում են և՛ **ն** հոդով, օրինակ՝ *իվերայ խաչին* (21), *աղօթքին հետև* (162) ևն, և՛ առանց **ն** հոդի, ինչպես՝ *խոյերի նման* (607), *ազգաց վերայ* (605) ևն:

3. Բացառական հոլովը հիմնականում կազմվում է **է** թեքությո՞վ, օրինակ՝ *փորձանքէ* (21), *ազգերէ* (155), *ձեռքէն* (156), *կողմէ* (838) ևն: Կան նաև բացառականի **ից**-ով կազմություններ, որոնք նվազ կիրառություն ունեն, ինչպես՝ *մեզանից* (45), *ինձանից* (170) ևն: Սակայն գրաբարյան հոգնակի բացառականի ձևերը համապատասխան հոլովիչով և **ց**-ով հաճախակի են հանդիպում, օրինակ՝ *ի մեռելոց* (15), *ի բամբասանաց* (161-162), *ի ձեռն մարգարէից* (615) ևն: Բացառական հոլովի կազմության վերաբերյալ կարող ենք առանձնացնել երկու խումբ՝ նախորդավոր և աննախդիր, օրինակ՝ *յոչնչէ* (154), *ի վտանգից* (801), *ի մտաց* (838), *բերանէն* (16), *ձեռքէն* (156), *կողմէ* (838) ևն: Աննախդիր բացառականի ձևերը շատ նվազ կիրառություն ունեն՝ ի տարբերություն նախորդավորների: Առկա են առանց հոդի և հոդով կիրառություններ, ինչպես՝ *մարդկանցէ* (167), *յաշխարհէ* (804), *ի ծննդէնէ* (835), *լեռնէն* (21), *երեսէդ* (28), *վշտէս* (616) ևն:

4. Գործիական հոլովով կազմությունները հիմնականում հանդիպում են հետևյալ թեքությո՞ներով՝ *աւ-լեզուաւ* (5), *իւ-մտիւ* (17), *ով-մարմնով* (15), *խոսքերով* (169), *մք-բարկութեամք* (20), *օք-փառօք* (26): Կրկին կարելի է առանձնացնել զուտ գրաբարյան ձևեր (**աւ**, **իւ**, **օք**), ոչ զուտ գրաբարյան ձևեր (**ով**, **մք**, որոնք գրաբարից հետո գործածվել են նաև միջին հայերենում, աշխարհաբարում): Գործիականի վերոհիշյալ բոլոր ձևերը հաճախ են գործածվում: Առկա են հոդով, ինչպես՝ *խրատովն և խորհրդովն* (12), *կամօքդ* (29) ևն, և առանց հոդի կիրառություններ՝ *ոսկւով և արծաթով* (151), *խորհրդով* (155), *ջանիւ* (839) ևն:

5. Ներգոյական հոլովի կիրառությունների վերաբերյալ դարձյալ կարելի է առանձնացնել երկու խումբ՝ զուտ գրաբարյան ձևեր և նոր ձևեր: Զուտ գրաբարյան ձևերը նվազ գործածություն ունեն (*ի մաքրափայլ յաղօթս ձեր* (7), *յաւուրս* (168), *ի տան* (836) ևն): Նոր ձևերի խմբում կարող ենք առանձնացնել հետևյալ շերտերը՝ **մէջ**-ով կազմություններ՝ *ի մէջ դրախտին* (13), *մեղաց մէջ* (24), *սրտի մէջն* (24), *յանկողնոյ մէջն* (24) ևն (հաճախ է նաև **միջում**-ի կիրառությունը՝ *նեղութեան և վշտի*

միջում (23), *խղճութեան և տառապանաց միջումն* (159)), և **ում**-ով կազմություններ՝ *սաղմոսումն* (16), *աստուածաշնչումն* (16), *աշխարհումն* (601), *կեանքումն* (602) ևն: Կրկին առկա են հոդով և առանց հոդի կիրառություններ, ինչպես՝ *սրտի մէջն* (24), *բերանումն* (28), *ի յերկրի* (605), *ի տան* (836) ևն:

Նույնների քննությանն անդրադառնալիս հարկ է նշել, որ երկի լեզվում չի հանդիպում **ը** հոդը, գործածվում է միայն **ն**-ն: Բնորոշ է նաև գոյականի հոդով և անձնական դերանվան սեռական հոլովաձևի միաժամանակյա կիրառությունը (գոյականների կրկնակի հատկացականություն), օրինակ՝ *քո բարութիւնդ* (169), *իմ սրտիս* (507), *քո մխիթարութիւնդ* (507) ևն: Առկա են նաև միայն դերանվամբ կապակցություններ, ինչպես՝ *իմ հօր* (18), *քոյ աչաց* (27), *սրբոց քոց* (837) ևն:

Խոնարհման համակարգ: 1. Երկի լեզվում դրական ներկան կազմվում է **կու** (**կ**) մասնիկով՝ *կու խօսի* (11), *կու բնակի* (17), *կուքննէ* (34), *խնամք կուտանիս* (38), *կու հայհոյէր* (109), *պտուտ կուգամ* (125), *կուօրհնարանէն* (831) ևն²⁸: 2. Աճառյանը նշում է, որ *կու* մասնիկի առաջին վկայությունը տրվել է 12-րդ դարում: Կիլիկյան շրջանում հեղինակների համար այն սովորական իրողություն է դարձել²⁹:

Հարադրական ներկայի ձևերը, որոնք բնորոշ են արևելյան բարբառներին, հատուկ չեն գրքի լեզվին, հանդիպում են **ում**-ով ներկայի մի քանի գործածություններ միայն, որոնք կարելի է որպես բացառություն դիտել **կու** (**կ**) մասնիկով ներկայի բազմաթիվ օրինակների շարքում, ինչպես՝ *է գտվում* (55), *չէ կարում* (55):

2. Ներկա և ըղձական ապառնի ժամանակներում հոգնակի առաջին դեմքի **-մք** և **-նք** վերջավորությունների կիրառության ուսումնասիրությունը (սրանք կարելի է համարել գրաբարյան և աշխարհաբարյան զուգաձևեր) ցույց է տալիս, որ «Պարզաբանութիւն» գրքի լեզվին բնորոշ են **-նք**-ով ձևերը, օրինակ՝ *կտրատենք*, *ի դէն ձգենք* (17), *ուզենք* (52), *խոսինք* (52), *օրհնենք* (87) ևն, իսկ **-մք**-ով օրինակները հազվադեպ են հանդիպում՝ *հաստատիմք* (6), *մերձենամք* (6) ևն: **-Մք** վերջավորությունը գրաբարյան իրողություն է, իսկ **-նք**-ն՝ միջինհայերենյան, որը հետագայում փոխանցվել է արևելահայերենին և արևմտահայերենին:

3. Սահմանական եղանակի ներկա և ըղձական եղանակի ապառնի ժամանակաձևերով խոնարհված բայերի եզակի թվի երրորդ դեմքում զուգահեռ գործածվող **-է** և **-ի** դիմանիշներից առավել հաճախակի

²⁸ Ինչպես վերը նշվել է, օրինակները բերում ենք բնագրային ուղղագրությամբ: Հարկ է նշել, որ **կու** (**կ**) մասնիկը հիմնականում բային միացյալ է գրված (գուցե տպագրության արդյունքում է այդպիսի պատկեր ստացվել): Անջատ գրությունները ոչ հաճախ են հանդիպում:

²⁹ Տե՛ս **Ն. Աճառյան**, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. IV, Ա գիրք, Եր., 1959, էջ 389:

է -է-ի գործածությունը, օրինակ՝ լուծէ (3), կատարէ (12), կու մատնէ (14), կու աղօթէ (23), վկայէ (820), որոնց կողքին կիրառվում են նաև -ի դիմանիշով կազմություններ, ինչպես՝ կու նմանի (12), սկսանի (13), կու խօսի (16), շրջի (804) ևն: -Ի-ով ձևերի հիմքում հիմնականում ընկած են գրաբարյան լծորդները: Հայոց լեզվի զարգացման ընթացքում -ի դիմանիշը բնորոշ դարձավ արևելյան բարբառներին և արևելահայերենին, իսկ արևմտահայերենին հատուկ են -է դիմանիշով կազմված ձևերը, համապատասխանություն կա նաև միջին հայերենի և մասամբ գրաբարի հետ:

4. Գործածվում է եւմ օժանդակ բայի 3-րդ դեմքի է ձևը, օրինակ՝ գիտելի է (8), խորագիր է (9), այն է (12), անելն է (57) ևն: Եւմ օժանդակ բայի եզակի թվի երրորդ դեմքի է ձևի կիրառությունը համապատասխանություն է գրաբարի, միջին հայերենի, արևմտյան բարբառների հետ: Օժանդակ բայի ա ձևը, որն արևելահայ խոսքում շատ է տարածված, ընդհանրապես չի հանդիպում³⁰: Այն, ի դեպ, չի կիրառվում նաև աշխարհաբար առաջին տպագիր գրքի՝ «Արևեստ համարողութեան» (1675 թ.) երկի լեզվում, սակայն գործածվում է վաղաշխարհաբարյան մեկ այլ՝ «Գանձ չափոյ, կշոյ, թոյ եւ դրամից բոլոր աշխարհի» (1699 թ.) գրքում՝ ուշուրն այ (35), կօպէք այ (36)³¹ ևն:

5. Վաղակատար ժամանակը կազմվում է -եր վերջավորություն ունեցող կախյալ դերբայով, օրինակ՝ ծներ է (16), վիզն են դրեր (17), պաշարերէին (22), հաւասար եմ եղեր (829) ևն: Երկում -եր-ով վաղակատարի գործածությունը կապվում է միջինհայերենյան և արևմտյան բարբառներին հատուկ համապատասխան ձևերի հետ: -Եր-ով վաղակատարը հանդիպում է միջին հայերենի բնագրերում, այն բնորոշ է արևմտյան մի շարք բարբառների, օրինակ՝ Կարինի, Մուշի, Խարբերդ-Երզնկայի, Արաբկիրի, Շապին-Գարահիսարի ևն: Իսկ -ել-ով վաղակատարը հատուկ է արևելյան բարբառներին, ինչպես՝ Արարատյան, Նոր Ջուղայի, Աստրախանի, Ագուլիսի, Կարճևանի (այս բարբառում հանդիպում են հատուկենտ օրինակներ): -Ել-ի -ալ տարբերակով վաղակատարը ևս արևելյան բարբառներին է բնորոշ, օրինակ՝ Արցախի, Շամախու, Ագուլիսի, Մեղրու ևն³²: Հանդիպում են նաև -ել վերջավորությամբ

³⁰ Հայտնի է, որ այսօր արևելահայերեն խոսքում եւմ օժանդակ բայի եզակի թվի երրորդ դեմքի է ձևի փոխարեն շատ հաճախակի գործածություն ունի ա ձևը: Ռ. Իշխանյանն իր «Արևելահայ բանաստեղծության լեզվի պատմություն» աշխատության մեջ նշում է. որ ա կամ է երրորդ դեմքի բայը և էս, էդ, էն կամ այս, այդ, այն դերանուններն ու նրանցով կազմվածները հայերեն խոսքում ամենաշատ գործածվող բառերից են, հետևաբար և նրանց՝ ժողովրդա-բարբառային և գրաբարյան զուգահեռներից մեկի կամ մյուսի ընտրությունն ու գործածությունը անմիջապես նկատելի է դառնում լեզվում (տե՛ս Ռ. Ա. Իշխանյան, Արևելահայ բանաստեղծության լեզվի պատմություն, Եր., 1978, էջ 234):

³¹ Տե՛ս Ղ. Վանանդեցի, Գանձ չափոյ, կշոյ, թոյ եւ դրամից բոլոր աշխարհի, Ամստերդամ, 1699, էջ 35-36:

³² Տե՛ս Ա. Ա. Աբրահամյան, Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշա-

վաղակատարի հատուկենտ ձևեր, օրինակ՝ *ասել է* (60), ինչպես նաև գրաբարյան վաղակատար-հարակատար ժամանակաձևեր՝ *է ասացեալ* (49), *է շարադրեալ* (58), *եմ յանձնեցեալ* (457), *է գուշակեալ* (838) նն:

6. Գործածվում են **պիտի** դիմավոր բայով և անորոշ դերբայով կամ խոնարհված բայով կազմված միավորներ, օրինակ՝ *պիտի տանի* (16), *պիտի անէ* (148), *պիտի լինի* (488), նաև **պիտի**-ի խոնարհված ձևերով կապակցություններ, ինչպես՝ *պիտին կորնչիլ և մատնիլ* (15), *պիտինք հանգչիլ* (26), *պիտիմ ստանալ* (62), *պիտեր հնազանդեցուցանել և դարձուցանել* (73), *պիտիս տալ* (807) նն: Նման կապակցությունները բնորոշ են արևելյան բարբառներին: Հանդիպում են **պիտի** բայով և հարակատար դերբայով հատուկենտ նմուշներ, որոնք նվազ կիրառություն ունեն, օրինակ՝ *չի պիտի տարակուսած* (53):

7. Կիրառվում են **ուզել** բայի դիմավոր ձևի և լրացում դիմավոր բայի կապակցություններ, ինչպես՝ *կուզեն բանացնեն* (17), *կուզեն իլեն, յափշտակեն և կտրատեն* (110): Դիմավոր բայ+դիմավոր բայ միավորները հիմնականում բնորոշ են արևելյան բարբառներին (Երևան, Նոր Զուղա նն), թեև տվյալ գործածությունները **կ** եղանակիչով են, որն արևմտյան բարբառներին հատուկ իրողություն է: **Ուզել** բայի դիմավոր ձևը կապակցվում է նաև անորոշ դերբայի հետ, այս կիրառություններն ավելի հաճախ են հանդիպում, օրինակ՝ *կուզեր անել* (36), *կուզեմ երևիլ* (67), *կուզենան պոզահարել* (112), *կուզեին թոչիլ* (135) նն (նշենք, որ աշխարհաբար առաջին տպագիր գրքի՝ «Արհեստ համարողութեան» երկի լեզվում վերջին կապակցությունները շատ հազվադեպ են գործածվում ի տարբերություն «Պարզաբանութիւն» գրքի լեզվի):

8. **Անել** բայի անցյալի համար գործածվում են գրաբարյան **առնեմ** բայի անցյալ կատարյալի հիմքից բաղկացած ձևերը, ինչպես՝ *անտես արարիր* (45), *ահարեկ արարին* (70), *աղօթք արարի* (71), *միտք արարի* (147) նն:

9. **Վ** ածանցով բայաձևերը հաճախ են գործածվում, ինչպես՝ *կու դատապարտվին* (15), *կու համարվեն* (16), *կու խանգարվի* (26), *կուբարձվին* (821) նն: Այս բայաձևերի կիրառությունը աշխարհաբարի լեզվական կարևոր հատկանիշներից է:

10. Ներկայի ժխտական ձևերը կազմվում են **չ** ժխտական մասնիկով և **-ր** վերջավորությամբ դերբայով, օրինակ՝ *չի մտաներ* (15), *չեմ երկնչիր* (22), *չի պակասիր* (161), *չի դրիր* (828) նն: Նշենք, որ այս կազմությունն արևմտյան բարբառներին բնորոշ իրողություն է: Հանդիպում են նաև **չ** ժխտականով համադրական ձևեր՝ *չկայ* (21), *չկարենայ* (37), *չկայր* (64) նն, **ոչ** ժխտականով կազմություններ՝ *ոչ խնդրեմ* (13), *ոչ անցանիցեն* (14), *ոչ գիտացին* (481), *ոչ կարենաս* (819) նն, նաև անկատար դերբայով հետևյալ ժխտական կազմությունները՝ *չէ կարում* (55), *չէ գտվում* (56):

Եզրակացություն: Քննելով «Պարզաբանութիւն հոգեւուագ սաղմոսացն Դաւթի մարգարէին» վաղաշխարհաբարյան տպագիր գրքի վերոհիշյալ լեզվական հատկանիշները՝ կարելի է փաստել, որ գրքի լեզվում միահյուսված են գրաբարյան և բարբառային, վաղաշխարհաբարյան իրողությունները: Դրանք բաշխվում են հետևյալ կերպ.

ա) գրաբարյան ձևերի գերակշռություն (լիովին կամ մասամբ)՝ բառաձևեր, դերանունների գրաբարյան ձևեր, հոգնակի ուղղականի կազմություն, սեռական-տրականի հոգնակի, անորոշ դերբայի գրաբարյան սեռական-տրականի բացարձակ գործածություն,

բ) բարբառային, խոսակցական ձևերի գերակշռություն (լիովին կամ մասամբ)³³՝ ժողովրդաբարբառային բառեր, ժողովրդական հարադրություններ, դրական ներկայի կազմություն, ներկա և ըղձական ապառնի ժամանակներում հոգնակի առաջին դեմքի **-նք** վերջավորության կիրառություն, բայերի եզակի 3-րդ դեմքի **է** դիմանիշի գործածություն (սահմանական եղանակի ներկա և ըղձական եղանակի ապառնի ժամանակաձևերում), օժանդակ բայի 3-րդ դեմքի **է** ձև, վաղակատար ժամանակի կազմություն, **պիտի** դիմավոր բայի և անորոշ դերբայի կապակցություն, **ուզել** բայի դիմավոր ձևի և լրացում դիմավոր բայի կապակցություններ, **վ** ածանցով բայաձևեր, ներկայի ժխտական ձևերի կազմություն:

Քննությունը ցույց է տալիս, որ լեզվական որոշ իրողություններով երկի լեզուն հակված է դեպի արևելահայերենը, մի մասով՝ դեպի արևմտահայերենը: Մեր կողմից քննված լեզվական հատկանիշներից ստորև կներկայացնենք արևելահայերենին և արևմտահայերենին բնորոշ ձևերը՝

արևելահայ լեզվական իրողություններ՝

որոշ բառաձևեր (1. մէկ, 2. այս, այդ, այն, սա, դա, նա, 3. այլ, 4. լիներ), սեռական-տրականի հոգնակի, ում-ով ներգոյական, պիտի+դիմավոր բայ, պիտի+հարակատար դերբայ, ուզել բայի դիմավոր ձև+լրացում դիմավոր բայ



արևմտահայ լեզվական իրողություններ՝

բացառական հոլովի, դրական ներկայի, վաղակատարի, ժխտական ներկայի կազմություն, է դիմանիշ, եւ օժանդակ բայի 3-րդ դեմքի է ձև



միասնական նոր գրական լեզու, չբաժանված աշխարհաբար

«Պարզաբանութիւն հոգեւուագ սաղմոսացն Դաւթի մարգարէին» վաղաշխարհաբարյան տպագիր գրքի լեզվի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այն արդեն որոշակիորեն նորմավորված է, զուգահեռու-

³³ Դրական ներկայի **կու**-ով կազմությամբ (միջին հայերեն-բարբառային), օժանդակ բայի **է** ձևի գործածությամբ (գրաբար-միջին հայերեն-բարբառային) գրաբարյան, միջին հայերենի, բարբառային կետերը համընկնում են:

թյունները սակավ են: Ուրվագծված տեսնում ենք նոր գրական լեզվի քերականական հիմքը: Մեր քննած երկի լեզուն միասնական է, արևելահայ և արևմտահայ լեզվական իրողությունները միախառնված են, հետևաբար՝ գիրքը բնութագրվում է վաղաշխարհաբարյան միասնական մի լեզվավիճակով, որում արևելահայերենը և արևմտահայերենը դեռևս հստակ տարանջատված չեն: Հայոց լեզվի երկփեղկումն արևելյան և արևմտյան նորմավորված ճյուղերի աստիճանական կերպով սկսելու էր ի հայտ գալ նրա զարգացման հետագա ընթացքում (18-րդ դար):

Բանալի բառեր – *վաղ աշխարհաբար, տպագիր գիրք, լեզվական քննություն, բառօտազործում, հոլովման համակարգ, խոնարհման համակարգ, բարբառներ*

ТАМАРА ПОГОСЯН – Языковая система первопечатного толкования Давидовых псалмов на ашхарабаре. – В статье дан лингвистический анализ одной из первопечатных книг на ашхарабаре – «Толкование духовных псалмов пророка Давида» (1687). Исследованы три аспекта её языка – словоупотребление, система склонения и спряжения. Подчёркнуты следы грабара и диалектов, заметные в тексте на раннем ашхарабаре. Кроме того, показано, какие формы сближают книгу с восточноармянским, а какие – с западноармянским языком. Сделан вывод, что на этапе формирования ашхарабара ещё не прослеживалось чёткое разделение армянского языка на две ветви – восточную и западную.

Ключевые слова: *ранний ашхарабар, печатная книга, лингвистический анализ, словоупотребление, система склонения, система спряжения, диалекты*

TAMARA POGHOSYAN – The Lingual System of the Early Printed Book “Clarification of David Prophet’s Spiritual Psalms”. – The article studies the language of one of the first Modern Armenian printed books – “Clarification of David Prophet’s Spiritual Psalms” (1687). The linguistic research has been carried out taking into account the most descriptive features of the language of the book, which are presented in 3 sections: word usage, declension system, conjugation system. Old Armenian and dialectal, colloquial lingual phenomena are singled out in the conclusion. The present research depicts those phenomena by which the language of the book is, on the one hand, inclined to the Western Armenian and, on the other hand, Eastern Armenian. The analysis of the lingual phenomena of this printed book in Early Modern Armenian lets us conclude that its language is consistent, and is characterized by linguistic features typical to both eastern and western dialects. The book is characterized by a monolithic Early Modern Armenian linguistic situation, where the Western Armenian and Eastern Armenian are not distinctly separated.

Key words: *Early Modern Armenian, printed book, linguistic research, word usage, declension system, conjugation system, dialects*